ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«27» հունվարի 2017 թվականի № 11-Ա

< ՄԱՆԱՆԱ ԳՐԵՅՆ> ՍՊԸ_Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով՝ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 2016 թվականի դեկտեմբերի 15-ի տրված պետական գրանցման վկայականի թիվ 004 ներդիրը ընկերության անվանափոխման մասին, <ՄԱՆԱՆԱ ԳՐԵՅՆ> ՍՊԸ-ի փոփոխված կանոնադրությունը և ընկերության 2017 թվականի հունվարի 16-ի թիվ 03 գրությունը՝

Հրամայում եմ

1. Ընդունել ի գիտություն, որ <Մանանա Գրեյն> ՍՊ ընկերությունը անվանափոխվել է՝ < Մոդուս Գրանում> ՍՊ ընկերության:

2. Աշխատակազմի Ընդերքի տրամադրման գործակալության պետին՝

1) ապահովել <Մանանա Գրեյն> ՍՊ ընկերության ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում համապատասխան փոփոխությունների կատարումը.

2) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ >> ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ